ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԷԱՃՇՁԲ-19/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 05.12.2018թ. N 397/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 08.01.2019թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մուրադյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Գևորգյանը, Գ.Գալստյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Գնահատող հանձնաժողովի աշխատանքները վերսկսելու և հայտերի գնահատման մասին

Հաշվի առնելով, որ «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը սահմանված ժամկետում շտկել է հայտում տեղ գտած անհամապատասխանությունը և համակարգի միջոցով ներկայացրել է Հավելված 1-ը՝ դիմում-հայտարարությունը (կցվում է)՝ գնահատող հանձնաժողովը շարունակեց հայտերի գնահատումը՝

1. «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը գնահատել բավարար:
2. «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:
3. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե էլեկտրոնային հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար հրավերով սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:
4. Համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկել ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:
5.Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մուրադյան

Անդամներ՝ Ա.Գևորգյան

Գ.Գալստյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան